# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
## ՄՐԳԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնք.1-ին փ. շ. 22 mrgashen.kotayq@mta.gov.am

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ.ԳՈՒԼՈՅԱՆ

թիվ 221
01 հոկտեմբերի 2015թ.

Հարգելի պարոն Կ.Գուլոյան

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետի համաձայն Ձեզ է ուղարկվում Մրգաշեն համայնքի ավագանու 2015 թվականի սեպտեմբերի 30-ին կայացած թիվ 8 նիստի որոշումները թղթային և էլեկտրոնային տարբերակով:

Առդիր 4 թերթ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՐԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մրգաշեն համայնք.1-ին փ. շ. 22
mrgashen.kotayq@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

«30» սեպտեմբերի 2015 թվականի N 26

## ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 8 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի պահանջով համայնքի ավագանին որոշում է

Հաստատել համայնքի ավագանու 2015 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 8 արտահերթ նիստի օրակարգը.

1. Մրգաշեն համայնքի 2015թվականի բյուջեով նախատեսված վարչական մասի պահուստային ֆոնդից «սոցիալական հատուկ արտոնություններ» ծրագրին գումար հատկացնելու մասին
2. «Մրգաշեն համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորություններին համաձայնություն տալու մասին
3. «Մրգաշեն համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործունեությունը ժամանակավոր դադարեցնելու մասին

Կողմ (7) Դեմ (0) Ձեռնպահ(0)

/ / Ա.Ասատրյան
/ / Լ.Գրիգորյան
/ / Մ.Խաչատրյան
/ / Հ. Համբարձումյան
/ / Լ. Մարտիրոսյան
/ / Գ.Մուրադյան
/ / Դ.Մարգսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՐԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22
mrgashen.kotayq@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

«30» սեպտեմբերի 2015 թվականի N 27-Ն

## ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԾՐԱԳՐԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Մրգաշեն համայնքի 2015 թվականի բյուջեով նախատեսված վարչական մասի պահուստային ֆոնդից 1.000.000դրամ հատկացնել «Սոցիալական հատուկ արտոնություններ» (բաժին 10, խում 7, դաս 1) նախահաշիվ «4729» հոդվածին:

Կողմ (7) Դեմ (0) Ձեռնպահ(0)

/ / Ա.Ասատրյան

/ / Լ.Գրիգորյան

/ / Մ.Խաչատրյան

/ / Հ. Համբարձումյան

/ / Լ. Մարտիրոսյան

/ / Գ.Մուրադյան

/ / Պ. Սարգսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԱՐԱՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22
mrgashen.kotayq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«30» սեպտեմբերի 2015 թվականի N 28

## « ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի, 32-րդ հոդվանի 1-ին մասի 9-րդ կետի, Հայաստանի Հանրապետության պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի բ/ ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով Մրգաշեն համայնքի ղեկավարի առաջարկությունը համայնքի ավագանին որոշում է.

Համաձայնություն տալ

1. Դադարեցնել «Մրգաշեն համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մելանյա Հայրապետյանի լիազորությունները
2. «Մրգաշեն համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանկել Մարգարիտ Մուրադյանին

Կողմ (7) Դեմ (0) Ձեռնպահ(0)

/ / Ա.Ասատրյան

/ / Լ.Գրիգորյան

/ / Մ.Խաչատրյան

/ / Հ. Համբարձումյան

/ / Լ. Մարտիրոսյան

/ / Գ.Մուրադյան

/ / Պ. Սարգսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԱՐԱՄՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մրգաշեն համայնք.1-ին փ. շ. 22
mrgashen.kotayq@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

«30» սեպտեմբերի 2015 թվականի N 29

### « ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով համայնքի ավագանին որոշում է.

1. «Մրգաշեն համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատանքները դադարեցնել 2015 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2016թվականի մայիսի 1-ը:
2. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենին և պահակին համարել աշխատանքի մեջ և վճարել աշխատավարձը 100 տոկոսով:

Կողմ (7) Դեմ (0) Ձեռնպահ(0)

/ / Ա.Աստրյան
/ / Լ.Գրիգորյան
/ / Մ.Խաչատրյան
/ / Հ. Համբարձումյան
/ / Լ. Մարտիրոսյան
/ / Գ.Մուրադյան
/ / Դ. Սարգսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԱՐԱՄՅԱՆ